ԼՐԱՏՈՒ

ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՇԱՐՎԱԾՔՆԵՐԻ ՏԻՊԵՐԸ ՀԻՆ ԱՐՏԱՇԱՏՈՒՄ
(դասակարգման փորձ)

1970 թվականից ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը Արտաշատում կատարում է պեղումներ, որոնք կարևոր նշանակություն ունեն անտիկ Հայաստանի նյութական մշակույթի ուսումնասիրության համար։ Այդ պեղումների շնորհիվ հայտնաբերվել են քաղաքի պաշտպանական համակարգի, զորանոցների, տնտեսական շենքերի, բնակելի տների, կոմունալ տեխնիկայի կառույցների և տարբեր տեսակի արհեստանոցների շինարարական մնացորդներ[1]։

Արտաշատը, ինչպես հայտնի է, հիմնադրվել է մ. թ. ա. 180—170-ական թթ.[2] և մոտ 500 տարի շարունակ եղել է Հայաստանի մայրաքաղաքը։ Այն տեղադրված է 12 մեծ ու փոքր բլուրների և դրանց կից հարթավայրի վրա։ Կենտրոնական թաղամասերը կազմող, առաջինից մինչև տասներորդ բլուրների համակարգի միջուկը ամենաբարձր երկրորդ բլուրն է, որի վրա, ըստ երևույթին, եղել են պալատական և պաշտամունքային շինություններ։ Սրան հյուսիսից հարում է II բլուրը, որի վրա բացվել են զորանոցների, զենքի պատրաստման արհեստանոցների և բնակելի տների հետքեր։ II բլրից հարավ գտնվող VI և VII բլուրները նույնպես խոշոր և լավ պաշտպանված թաղամասեր են եղել։ Վերջիններիս և II բլրի միջև գտնվող III և IV բլրակների վրա կառուցված էին պարիսպներով ամրացված անցումներ, որոնց օգնությամբ կապ էր հաստատվում թաղամասերի միջև։ Մնացած բլուրները (№ V, VIII, IX, X) կառուցապատված են եղել բնակելի շենքերով և արհեստանոցներով[3]։

Այս հուշարձանի ուսումնասիրման բարդությունը առաջացել է այն պատճառով, որ նոր կառույցների հիմքերը տեղադրելիս հարթեցվել են նախորդ շինարարական շրջանին վերաբերող ավերված կառույցների մնացորդները, որի հետևանքով էլ մշակութային շերտերի և շինարարական շրջանների հաջորդականությունը հստակ չէ։ Շինությունների ավերումը միաժամանակ չէր կատարվում։ Այդ հանգամանքը համապատասխան ձևով անդրադարձել է պեղումների ընթացքում բացվող շինարարական հորիզոնների քանակի և շերտագրության վրա։ Այսպես, օրինակ, I բլրի պեղումները հայտնաբերել են հիմնականում երկու[4], իսկ VII—VIII-ը՝ չորս շինարարական շրջաններ[5], սակայն մինչև այժմ չի կատարվել շինարարական մնացորդների բավական նաչափ մանրամասն և ամբողջական վերլուծություն։ Դա էապես իջեցնում է այդ կարևոր հնագիտական աղբյուրի ինֆորմատիվության աստիճանը։ Նույնը կարելի է ասել Անդրկովկասի՝ վերջին տասնամյակների ընթացքում պեղված, անտիկ դարաշրջանին վերաբերող բոլոր հուշարձանների մասին։ Բացառություն են կազմում միայն բարձր որակով մշակված քարերից կատարված կլասիկ տիպի շարվածքները (օրինակ՝ Գառնիի տաճարի պատերի, Վանիի և Մցխեթի որոշ բարձրորակ շարվածքներ և այլն)։ Շինարարական մնացորդների ուսումնասիրությունն ու վերլուծությունը, պատերի շարվածքների դասակարգումը և ունիֆիկացիան, թույլ են տալիս բացահայտել տեղական ճարտարապետության և շինարարության առանձնահատկությունները, ավելի վստահ և հիմնավորված կատարել կառույցների ծավալատարածական և հատակագծային վերա-

---

[1] Б. Н. Аракелян, Арташат I. Основные результаты раскопок 1970—1977 гг. («Археологические раскопки в Армении», 1982, № 16). Ժ. Դ. Խաչատրյան, Արտաշատ II, Անտիկ դամբարանաղաշտեր. 1971—77 թթ. պեղումները («Հնագիտական պեղումները Հայաստանում», 1981, № 17)։

[2] Б. Н. Аракелян, նշվ. աշխ., էջ 9։

[3] Ж. Д. Хачатрян, А. В. Тоникян, Некоторые вопросы градостроительства античного Арташата («Четвертыи международный симпозиум по армянскому искусству» (тезисы докладов), Ереван, 1985, с. 286—288).

[4] Ժ. Դ. Խաչատրյան, Արտաշատի VII բլրի՝ 1973—1975 թթ. պեղումների արդյունքները (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններիս», 1978, № 8, էջ 56)։

[5] Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Գ. Կանեցյան, Արտաշատի VIII բլրի շերտագրությունը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններիս», 1974, № 9, էջ 76—91), Ժ. Դ. Խաչատրյան, «Արտաշատի VII բլրի՝ 1973—1975 թթ. պեղումների արդյունքները», էջ 56։

կազմությունները, օգնում են մշակել հուշարձանների շերտագրությունները և թվագրումները և, վերջապես, հնարավորություն են տալիս ավելի խորը ուսումնասիրել շինարարական տեխնիկայի պատմության հարցերը։

Շինարարական նյութի վատ, հաճախակի անմշակ օգտագործման և զգալի քանակությամբ շերտերի առկայության պատճառով Արտաշատի հնագիտական կառույցների շարվածքները շատ դժվար են ենթարկվում նկարագրության և հստակ գրաֆիկական հաստատագրման։ Պատերի շարվածքների տերմինաբանության հարցին անդրադարձել են մի շարք հետազոտողներ[6], սակայն նրանց առաջարկած մեթոդները լիարժեք չեն։ Մենք օգտագործել ենք շարվածքների նկարագրման և դասակարգման Հյուսիս-սեծովյան հուշարձաններում կիրառվող մեթոդիկան[7], որի հիմքում ընկած է ժամանակակից աղյուսե շարվածքների համար ընդունված դասակարգման սկզբունքը։ Այն բաղկացած է հետևյալ հիմնական կետերից՝ ա) շարվածքի ուղղաձիգ լայնական հատման բնութագիր (միաշերտ, երկշերտ, եռաշերտ և այլն), բ) շարվածքի սիստեմի բնութագիր (կանոնավոր, անկանոն, պոլիգոնալ շարքային և այլն), գ) օգտագործված նյութի բնութագիր (ձևը, մշակման եղանակը, միջին չափերը), դ) շարվածքի տեխնիկայի բնութագրումը (շարքերի չափերը, կապակցման եղանակը, կարերի մշակման աստիճանը և այլն)[8]։ Անհրաժեշտ է նշել, որ վերոհիշյալ մեթոդիկան հնարավորություն տվեց որոշել Արտաշատի, հատկապես նրա VIII բլրի, շինարարական մնացորդների (որոնք վերաբերում են մ. թ. ա. II դ. սկզբից մինչև մ. թ. IV դ. 60-ական թվականները և բաժանվում են չորս շինարարական շրջանների՝[9] 1) մ. թ. ա. 180 թ.—մ. թ. 59 թ., 2) մ. թ. 60—160 թթ., 3) մ. թ. II դ. վերջ, III դ. սկիզբ—IV դ. 30-ական թթ., 4) մ. թ. IV դ. 30—60 թթ.) յուրաքանչյուր շրջանին բնորոշ շարվածքների տիպերը, որով և ստացված է ամբողջական և հստակ դասակարգման սխեմա։

Այսօրվա դրությամբ Արտաշատում պատի կոնստրուկցիաների եթե ոչ ամբողջ, ապա գերակշռող մասը կազմում են հում աղյուսե կամ կավաշեն պատերը՝ քարե հիմքի կամ հիմնախարսխի վրա։ Հնագիտական աշխատանքները ցույց են տվել, որ Հայաստանի առանձին վայրերում, հիմնականում դաշտային շրջաններում, լայնորեն կիրառվել է հում աղյուսը[10]։ Այդուհանդերձ պատերը պահպանվել են միայն առանձին հատվածներում, ուստի, նրանց տիպերը առայժմ հընթացավոր չի լիարժեք ներկայացնել։ Աշխատանքը հիմնականում վերաբերում է քարե հիմքերի և հիմնախարիսխների կոնստրուկտիվ համակարգերի ուսումնասիրմանը։ Քարե հիմքերը պահպանում էին հում աղյուսե պատերը վնասվելուց ենթնավություն թափանցելուց։

Քարե շարվածքների զարգացման ընթացքը հետաքրքրելու համար առավել հարմար է VIII բլրի հարավային հատվածը, որտեղ տեղանքի փոքր թեքության և մշակութային շերտի հզորության շնորհիվ (տեղ-տեղ 3—3,5 մ և ավելի) շարվածքները համեմատաբար լավ են պահպանվել։ Այն հյուսիս-հարավ առանցքով սահմանափակված է 12—20, իսկ արևելք-արևմուտք առանցքով՝ i—N կոորդինատներով[11]։ Այս հատվածում առավել վաղ ժամանակաշրջանի շինությունների թվին են պատկանում № 223, 225, 233, 304, 308, 327, 343 շարվածքները։ Լավ պահպանված օրինակ կարելի է համարել № 343 շարվածքը, որը բնակելի տան արտաքին կրող պատն է։ Այն եռաշերտ է, երկճակատանի շարվածքով, կազմված է միջին չափերի կոպիտ հեղքված տեղական քարերից, որոնք տեղադրված են տափանված գետնի վրա։ Պատի վերին մասը հում աղյուսից է, միաշարք համակարգով, որի ամեն հաջորդ շարքն ուղղաձիգ կարերի տեղաշարժ ունի՝ աղյուսի կես լայնության չափով (0,2 մ)։ Շարքերի բարձրությունը 0,15 մ է, իսկ կարերի հաստությունը՝ 2—3 սմ։ Այս տեղամասի շինարարական շերտի մյուս շարվածքները ևս կատարված են նույն տեխնիկայով, թեև որոշ տեղերում դրանց համար հիմք են ծառայում խընամքով մշակված և հարթեցված ժայռերը

---

[6] R. L. Scranton, Greek Walls, Cambridge, 1941, p. 23; A. K. Orlandos, Les materieux de construction et la technique architecturale des anciens Grecs, Paris, 1968, part II, p. 127—160.

[7] С. Д. Крыжицкий, Жилые ансамбли древней Олвии IV—II вв. до н. э., Киев, 1971, с. 114; его же, О принципах классификации античных кладок Северного Причерноморья («Краткие сообщения Института археологии», № 168, М., 1981, с. 35—41).

[8] С. Д. Крыжицкий, О принципах классификации...», с. 39.

[9] Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Գ. Կանեցյան, նշվ. աշխ., էջ 91։

[10] О. Х. Халпахчян, Строительная культура Армянского нагорья с древнейших времен по VII в. до н. э. («Архитектурное наследство», № 31, 1983, с. 114).

[11] Տրված է ըստ արշավախմբի դաշտային փաստաթղթերի կոորդինատների ցանցի։



1. Շարվածք № 334, 2. Շարվածք № 222 (հատված), 3. Շարվածք № 191, 4. I բլրի շարվածք, 5. Շարվածք № 268։

(№ 223 շարվածքը)։ Մեծ հետաքրքրություն է Ներկայացնում № 327 շարվածքը, որն ըստ երևույթին, նկուղային կամ կիսանկուղային սենյակ է եղել։ Հյուսիսային պատը, որը պահպանվել է մոտ 2 մ բարձրությամբ, ունի աստիճանաձև կառուցվածք, դրա ներքևի մասի լայնությունը ավելացվել է մոտ 0,2 մ։ Ինչպես արդեն ասվեց, այդ պատերի շարվածքները վերաբերում են այս հատվածի ամենավաղ շինությանը, որը կառուցվել է քաղաքի հիմնադրման հետ դրեթե միաժամանակ և հիմնովին ավերվել, ըստ երևույթին, մ. թ. ա. I դարի կեսերին։ Այդ մասին են վկայում № 344, 311, 328, 329, 305, 309, 317, 345 և մյուս շարվածքները, որոնք, գտնվելով առաջին շինարարական շրջանում[12], կազմում են մի բնակելի համալիր ևս, որն իր հատակագծով հիմնականում կրկնում է նախորդին։ Որոշ հատվածներում նկատվում է պատերի տեղաշարժ նախորդ շերտի համեմատ։ Համալիրը հյուսիսից (№ 223) և հարավից (№ 343) սահմանափակող պատերը հավանաբար պահպանվել կամ վերակառուցվել են նույն տեղում։ Առաջին շինարարական շրջանում՝ մ. թ. ա. առաջին դարի կեսերին, հիմնական վերակառուցում է նկատվել I բլրի ողջ տարածքով մեկ[13]. հայտնաբերվել են վերակառուցման առանձին հետքեր և VIII բլրի հյուսիսային հատվածներում[14], որտեղ դրանց ծավալի մասին

12 Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Գ. Կանեցյան, նշվ. հոդվ., էջ 91։

13 Ժ. Դ. Խաչատրյան, Արտաշատի VII բլրի 1973—1975 թթ..., էջ 56։

14 Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Գ. Կանեցյան, նշվ. հոդվ., էջ 77 (հատակագիծ)։

վերջնական պատասխան կտան հետագա պեղումները։ Այսպիսով, չի բացառվում, որ I և VIII բլուրներում առկա է համաժամանակյա շինարարական շրջան (մ. թ. ա. I դարի կես—մ. թ. 59 թ.), որը կարող է վերաբերել նաև ամբողջ քաղաքին։

Վերակառուցված համալիրի շինարարական մընացորդներից աչքի է ընկնում № 344 շարվածքը, որը լավ պահպանված և բնորոշ օրինակներից մեկն է։ Պատի քարե հիմքը երկշարք է, եռաշերտ, երկճակատանի, շարված՝ տեղական կոպիտ ճեղքված մոխրագույն մարմարից, կավե շաղախով։ Տոփանված հողին տեղադրված շարվածքի առաջին շարքի ճակատային մասի քարերի միջին չափերն են. լայնությունը՝ 0,2—0,25 մ, բարձրությունը՝ 0,15—0,18 մ։ Հաջորդ շարքը 4—5 սմ հաստություն ունեցող սալերից է, որոնք հիմք են ծառայում աղյուսե պատի համար։ Այս հատվածում պահպանվել են չորս շարք աղյուս և մուրճի բացվածքի հետքեր։ Աղյուսե պատի սիստեմը նույնն է, ինչ և նախորդ շերտում։ Սենյակի վերանորոգման հետևանք հանդիսացող № 317, 342, 313, 314 շարվածքների կոնստրուկտիվ համակարգերը նույնպես բացառություն չեն կազմում։ Ըստ երևույթին, նորոգումը կատարվել է միայն այս սենյակում, քանի որ նման հետքեր VIII բլրի պեղված մյուս մասերում դեռևս չեն հայտնաբերվել։

I բլրի երկու շինարարական շրջանների հատակագծային լուծման հստակությունն ու միասնությունը, պատերի շարվածքների խնամքով կատարումն ու բարձր որակը, օգտագործվող քարերի չափերի միատիպությունը բացատրվում են նրա պաշտպանական նշանակությամբ. կառույցները զորանոցային տիպի էին՝ հարմարեցված կայազորի պահանջներին։ Ընտրված հատակագծային համակարգը տվյալ տեղանքի պայմաններում այն աստիճան ռացիոնալ և ներդաշնակ է լուծվել, որ ավերվելուց հետո վերականգնվել է ճիշտ նույն ուրվագծով, չնչին շեղումներով։ Երկու շինարարական փուլերից պահպանված պատերը շարված են միաշարք, եռաշերտ, երկճակատանի համակարգով, կոպիտ ճեղքված տեղական մոխրագույն մարմարի միջին չափերի բլոկներով։ Բլրի հյուսիս-արևելյան լանջի թեքության վրա պահպանվել են մինչև 2—2,6 մ բարձրությամբ շարվածքներ։ Դրանք կիսանկուղային կամ նկուղային սենյակների պատերի մնացորդներ են։ Պատերի հաստությունը տատանվում է 0,9—1,1 մ սահմաններում, վերևի մասերը, ըստ երևույթին, շարված են եղել հում աղյուսից, որի բեկորները հայտնաբերվել են պեղումների ընթացքում։ Առաջին շինարարական փուլի շարվածքներն աչքի են ընկնում կատարման ավելի բարձր որակով։

1984 թ. պեղումների ժամանակ բլուրների արտաքին պաշտպանական հողաթմբի հատվածներից մեկի վրա հայտնաբերվեցին շարվածքներ, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում։ Դրանց հիմնախարխային մասը շարված է տուֆե և կրաքարե կիսակլոր որմնասյուների մեկ շարք բլոկներից՝ երկու զուգահեռ շարքերով, որոնց միջև լցված են մանր քարեր և կավե շաղախ։ Շարվածքների լայնությունը տատանվում է 1,5—1,8 մ, բլոկների տրամագիծը՝ 0,9—1,2 մ, հաստությունը՝ 0,3—0,6 մ։ Նույնպիսի բլոկներով շարվածքներ (այլ տեսակի կոնստրուկտիվ լուծումով) հայտնաբերվել են պարիսպների երկրորդ պաշտպանական շարքում՝ II բլրի հյուսիսային լանջի վրա։ Այստեղ կիսակլոր բլոկները տեղադրված են պարսպի արտաքին ճակատային մասում, խոշոր չափերի կոպիտ ճեղքված քարերից շարված հիմնախարիսխի վերին շարքում՝ հիմք ծառայելով հում աղյուսե պատի համար։ Եզրային կլոր աշտարակի անկյունում տեղադրված երկու կրաքարե բլոկների (Ø=1,1 մ, h=0,3մ) արտաքին մակերեսներն ունեն նուրբ մշակում (ըստ երևույթին՝ կտրիչով, հնարավոր է նաև սանր տարազի օգտագործում)։ Բլոկների եզրերն ունեն 1—1,5 սմ լայնությամբ ռուստեր։

Նախորդ շինարարական շրջանների կառույցների ճարտարապետական մանրամասների օգտագործումը հաջորդ շրջանների կառույցների պատերի շարվածքների մեջ շատ ընդունված երևույթ է ինչպես Արտաշատում, այնպես էլ այլ հուշարձաններում՝ օրինակ. Պանտիկապեի մ.թ.ա. II դ. 540—586 պատերի շարվածքներում օգտագործված են մ. թ. ա. III դ. շինությունների սյուների թմբուկները[15]։

Երկրորդ շինարարական շրջանի շարվածքները, որոնք հայտնաբերվել են VIII բլրի համարյա ողջ պեղված տարածքով, բավական լավ են պահպանվել։ Մ. թ. I դարի շարվածքները հիմնականում միաշարք, եռաշերտ, երկճակատանի համակարգեր են՝ կոպիտ ճեղքված քարերից, կավե շաղախի օգտագործմամբ, պատերի հաստությունը տատանվում է 0,8—1,0 մ սահմաններում։ Ամենաբնորոշ օրինակներից են № 221, 222, 259, 281, 318, 319, 320, 340 և այլ շարվածքները։ Որոշ դեպքերում, ինչպես օրինակ № 318, 319, 359 շարվածքներում, վերին շարքը կազմված է մանր քարերից և սալերից[16], որոնք հիմք են ծառայում

15 И. Д. Марченко, Раскопки Пантикапея в 1965—1972 годах, рис. 12, с. 22 («Сообщения Государственного музея изобразительных искусств им. А. С. Пушкина», вып. седьмой. Культура и искусство Боспора, М., 1984).

16 Այս հնարքը գալիս է դեռևս I շինարարական շրջանից, որտեղ այն ավելի լայն և հիմնավոր կիրառում ուներ։

կավաշեն պատի համար, դրանց մնացորդները շատ տեղերում պահպանվել են։ Կավաշեն պատերի օգտագործման ավանդույթը հանդիպում է դեռ վաղ շրջաններում։ Ի տարբերություն առաջին շինարարական շրջանի, որտեղ հիմնականում օգտագործվում էին հում աղյուսե պատեր, այստեղ պատերը ծեփված էին կավե զանգվածից՝ կաղապարի օգնությամբ։ Պատերի արտաքին և ներքին մակերեսները ծածկվում էին 1—2 սմ կավե սվաղով։ Հաճախ սվաղը ներկվում էր տարբեր գույներով և մշակվում գունազարդ նախշերով։

Երկրորդ շինարարական շրջանի ամենահետաքրքիր օրինակներից է № 222 շարվածքը։ Այն միաշարք, եռաշերտ, երկճակատանի շարվածք է՝ կոպիտ ճեղքված քարերից, կավե շաղախի օգտագործմամբ։ Քարերի միջև հանդիպող խոշոր բացվածքները տեղ-տեղ լրացված են մանր քարերով։ Պատի երկարությունը կազմում է 40 մ, լայնությունը՝ 0,85—1,0 մ (տարբեր հատվածների անհավասարաչափ նստվածքների պատճառով հորիզոնական շարքերը ալիքաձև տեսք են ընդունել)։ Դա հենապատ է, որին ամբողջ երկայնության վրա ոչ մի պատ չի հատվում։ Այն ամրացված է հակասեյսմիկ գոտիով՝ բաղկացած երկու շարք գերաններից, որոնք իրար հետ կապված են կարճ գերաններով։ Նման օրինակ հայտնաբերվել է նաև II բլրի հյուսիսային լանջին։ Արտաշատի բլուրների մեծ թեքություն ունեցող լանջերի վրա այս շինարարական հնարքը պետք է որ գտներ լայն կիրառություն։ Գերաններ օգտագործումը քարե պատի կոնստրուկցիան ամրացնելու, դրան ճկունություն հաղորդելու նպատակով կիրառվել է նաև Վրաստանում (Ցիխիագորա)[17]։ Վիտրուվիոսը մանրամասն նկարագրում է այս կոնստրուկցիան իր աշխատության մեջ[18]։ Հայաստանում այս հնարքն օգտագործվել է նաև միջնադարում[19]։

Առանձին շարվածքներում հանդիպում են քիվերի, կղմինդրների, կրաքարե խարիսխների և բարձր որակով մշակված կվագրերի բեկորներ. օրինակ՝ № 293 շարվածքի մեջ, որը պահպանվել է 1,5 մ բարձրությամբ։ Հինգերորդ և վեցերորդ շարքերը շարված են երկրորդ օգտագործմամբ գիպսե քիվերի մասերից, որոնք զանազան պրոֆիլներ ունեն։

Երրորդ շինարարական շրջանի պատերը կերկնում են մ. թ. I—II դդ. պատերի ուրվագծերը։ Այդ շրջանում ճարտարապետական համալիրների վերականգնման և հատակագծերի վերափոխման հետ կապված Արտաշատում կատարվել են մեծ ծավալի աշխատանքներ։ Բնորոշ շարվածքների տիպերին են պատկանում երկշարք, հաջորդաբար հերթագայող 0,2—0,3 մ լափերի կոպիտ ճեղքված բլոկներով շարքերը 2—3 սմ հաստություն ունեցող սալերի շարքերի հետ։ Ուղղաձիգ հատման մեջ բոլոր շարվածքները եռաշերտ են և երկճակատանի (№ 265, 307, 310, 322, 323 և այլն)։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում «եղենաձև» շարվածքները։ № 283, 285 շարվածքներում սալերից բաղկացած վերին շերտի տակ պահպանվել են երկու, միջին չափի քարերից եղենաձև շարված շարքեր։ Այս պատերը եռաշերտ, երկճակատանի, կարերի կոպիտ մշակմամբ համակարգեր են։ Նույնպիսի օրինակ կարելի է համարել № 254 շարվածքը։ «Եղենաձև» շարվածքները հետագայում տարածում են ստանում վաղ միջնադարյան հուշարձաններում՝ օրինակ. Շամիրամ[20]։

VIII բլրի պեղավայրի արևելյան հատվածում հայտնաբերվել են տեռասաձև երկու կիսանկուղային սենյակներ, որոնց հյուսիսային և արևելյան պատերի շարվածքները՝ № 191, 192 և այլն, նույնպես «եղենաձև» են։ Ուղղաձիգ հատման մեջ դրանք երկշերտ և միաճակատ են, քանի որ մասամբ խորացված են մայր գետնի մեջ։ Քարերի միջին չափերն են՝ (0,15—0,17)—(0,2—0,25)մ։ Որոշ հատվածներում պահպանվել է 5—6 շարք, ընդհանուր բարձրությունը՝ 1,5—1,6 մ։ Այս սենյակներից մի փոքր դեպի հարավ պեղվել է ևս մի կիսանկուղային սենյակ, որի հյուսիսային (№ 370) և արևելյան պատերը տաշված են ժայռի մեջ մոտ 2,0—3,0 մ բարձրությամբ։ Այդ տաշված ժայռը ուղղելու և կարգի բերելու նպատակով այն երեսպատվել է զանազան չափերի կոպիտ ճեղքված քարերի անկանոն, տեղ-տեղ միաշարք, միաշերտ, միաճակատ շարվածքով։

Վերջին՝ չորրորդ շինարարական շրջանում կառուցապատման մակերեսը խիստ կրճատվում է, քաղաքն իր նշանակությունը կորցնում է, բնակչության քանակը պակասում, որի պատճառով

---

17 Г. Цкитишвили, Результаты работ на Цихиа-гора [«Полевые археологические исследования в 1974 г.» (краткие сообщения), Тбилиси, 1976, с. 60—61].

18 Витрувий, Десять книг об архитектуре, М., 1936, I гл., 5, § 3, с. 32.

19 Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, с. 174.

20 Հ. Ա. Օհանյան, Շամիրամի անտիկ ժամանակաշրջանի բնակավայրերի պեղումները [Հայկական ՍՍՀ-ում 1983—1984 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան («Զեկուցումների թեզիսներ», Երևան, 1985, էջ 40)]։

փաստորեն դադարում է նոր շենքերի կառուցումը, վերանորոգվում և օգտագործվում է եղած կառույցների մի մասը։ Այս շրջանի պատերի որակը շատ ցածր է, հիմնականում կառուցվում են կավաշեն պատեր նախորդ շրջանների շինարարական մնացորդների վրա։ Պատերի մակերեսները ծածկվում էին կավե սվաղի հաստ և կոպիտ շերտով (№ 268 պատի սվաղի մեջ տեղավորված են կղմինդրի խոշոր բեկորներ և քառակուսի թրծած աղյուսներ, որոնք սովորաբար օգտագործվում էին հատակը սալարկելու համար)։ Պատերի հաստությունը տատանվում է 0,6—0,9 մ։ Մեծ քանակությամբ են օգտագործվում նախորդ՝ երրորդ շինարարական շրջանից պահպանված պատերը։

Ամփոփենք. Արտաշատում կիրառված շարվածքների զարգացումը դիտվում է շինարարական չորս շրջանների ընթացքում (առաջին շրջանը բաղկացած է երկու փուլից)։ Ինչպես համոզվեցինք, պատերի տիպերի առաջին հայացքից թվացող միապաղաղության տակ թաքնված են առանձին շինարարական շրջաններին բնորոշ շինարարական հնարքների տարբերություններն ու առանձնահատկությունները։ Ուսումնասիրված բոլոր պատերը բաղկացած են քարե հիմքից կամ հիմնախարսխից, հում աղյուսե կամ կավաշեն վերին մասից, սակայն չի բացառվում, որ կարող էին գոյություն ունենալ նաև քարե պատեր՝ կառույցների ամբողջ բարձրությամբ, քանի որ առաջին բլրի վրա պահպանվել են ճեղքված քարերից շարված պատեր՝ մինչև 2,60 մ բարձրությամբ։

Առաջին շինարարական շրջանին վերաբերող պատերի քարե շարվածքներն աչքի են ընկնում շինարարական աշխատանքների կատարման բարձր որակով, կոնստրուկտիվ համակարգի իրականացման հետևողականությամբ[21], աշխատանքների բարեխիղճ կատարմամբ։ Ինչպես հայտնի է, Արտաշատի հիմնադրումն ու կառուցումը Արտաշես I-ի կողմից անհրաժեշտություն էր՝ պայմանավորված քաղաքական և տնտեսական նպատակներով։ Այն կառուցվեց միասնական հատակագծով, մեծ ուժերով և միջոցներով, սկզբնական շրջանում, բնականաբար, զբաղեցնում էր ոչ մեծ տարածություն (80—100 հեկտար)։

Մ. թ. 58 թ. հռոմեական զորքերը Կորբուլոնի հրամանատարությամբ գրավեցին Արտաշատը և հիմնովին ավերեցին այն, իսկ մ. թ. 60—70 թթ. Արշակունիների տոհմի հիմնադիր Տրդատ I-ը վերականգնում է Արտաշատը, հարմարեցնելով ժամանակի նոր պահանջներին։ Այս շինարարական շրջանին վերաբերող պատերը տեղադրված են նախորդ շրջանի պատերի հարթեցված և տոհանված փլվածքների վրա։ Կատարված աշխատանքների ծավալն ու որակը խոսում են երկրի հզորության մասին, սակայն, անմշակ քարերի և անկանոն շարվածքների առկայությունը, կավաշեն պատերի օգտագործումը վկայում են ոչ միայն այս դարաշրջանում քաղաքի հսկայական չափերի (շուրջ 500—600 հեկտար), այլև երկրի արտաքին ու ներքին ծանր վիճակի, աշխատանքների շուտափույթ կատարման, հմուտ վարպետների պակասի մասին։

Մ. թ. 163 թ. հռոմեական զորքերը նորից դրավում են Արտաշատը և մասամբ ավերում այն։ Երկրում 23 տարի իշխելու ընթացքում նրանք կատարեցին նաև մի շարք շինարարական և վերականգնման աշխատանքներ. այդ մասին են վկայում աղյուսների և կղմինդրների վրա պահպանված հռոմեական լեգեոնների կնիքները։ Երրորդ շինարարական շրջանի պատերը տեղադրված են նախորդ շրջանի գոյություն ունեցող պատերի հիմքերի վրա։ Շինարարական աշխատանքների որակն էլ ավելի է վատանում։ Այդ ամենը ցույց է տալիս երկրի քաղաքական և տնտեսական ծանր վիճակը, որը Հռոմի հետ երկարատև պայքարի հետևանք էր։

Չորրորդ շինարարական շրջանի պատերը կրում են վերջնական անկման բոլոր հետքերը՝ շինարարական աշխատանքների ցածր որակ, շարվածքների պարզունակություն, կավե սվաղների մեծ հաստություն։ Կառուցապատման համար օգտագործվում է քաղաքի տարածքի ընչին մասը։ Մովսես Խորենացին հաղորդում է, որ Խոսրով Կոտակ թագավորը արքունիքը տեղափոխում է Դվին (մ. թ. 332—338 թթ.), իսկ մ. թ. 360 թ. Շապուհ II թագավորը ներխուժում է Հայաստան և մյուս քաղաքների հետ մեկտեղ հիմնովին ավերում է նաև Արտաշատը։

Արտաշատում լայն տարածում են ունեցել բարձրորակ, սրբատաշ կրաքարի բլոկներով պատերը, որոնց բեկորները մեծ քանակությամբ հայտնաբերվել են պեղումների ժամանակ։ Գրտնըված առանձին կվադրերի վրա պահպանվել են «ծիծեռնակապոչ» և Π-աձև ակոսներ մետաղական կապերի համար։ Նման ակոսներ հայտնաբերվել են նաև Գառնիի և Արմավիրի պեղումների ընթացքում։ Հայաստանում դրանք օգտագործվել են մինչև մ. թ. VII դ. (Զվարթնոց)[22]։ Այս ամենը վկայում է անտիկ դարաշրջանի Հայաստանի շինարարական արվեստի բարձր մակարդակի մասին։

ԱՐՄԵՆ ՏՈՆԻԿՅԱՆ

---

21 Պատերի մեծ հաստության պատճառներիս մեկը կարող էր լինել երկրորդ հարկի առկայությունը, իսկ մյուսը՝ սենյակներում բավարար ջերմային ռեժիմի ապահովելը։

22 Н. М. Токарский, նշվ. աշխ., էջ 172։